ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՏՁ-82.1 ՄԱԿՆԻՇԻ ՏՐԱԿՏՈՐԸ ԵՎ ՀԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԵՔԵՆԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի մայիսի 6-ին ժամը 15:00-ին Մեծաձորի համայնքապետարանում (հասցեն՝ գ. Մեծաձոր, փ. 1, տուն 10) անցկացնել մրցույթ, համայնքի սեփականություն հանդիսացող ՄՏՁ-82.1 մակնիշի տրակտորը, և հակավորման մեքենան վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համար:

Մրցույթի առարկա է հանդիսանում՝

Լոտ 1. Մեծաձոր համայնքի սեփականություն հանդիսացող (2023 թվականի արտադրության, գույնը կապույտ, շարժիչը-209740, փոխանցման տուփը՝ 078248, ամրաշրջանակ Y4R900Z01P1132469, պետհամարանիշ 7240 LS, տեխնիկական վկայագիր 003087) ՄՏՁ-82.1 մակնիշի անիվավոր տրակտորը, հակավորման մեքենան (TUKAN-HP, 2023 թվականի արտադրության,ՊՊՏ-042) վարձակալության իրավունքով

օգտագործման է տրամադրվում 1 տարի ժամկետով, մեկնարկային գինը կազմում է տարեկան 150000 ՀՀ դրամ: Մրցույթի նախավճարի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 50 տոկոսի չափով՝ 75000 ՀՀ դրամ, իսկ մրցույթային քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոս ի չափով՝ 7500 ՀՀ դրամ: Մրցույթի նախավճարը պետք է վճարվի մրցույթի անցկացման օրը՝ մրցույթը սկսելուց 30 րոպե առաջ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ ըստ առանձին լոտերի, մասնակցության վճարի անդորրագիր (որի չափը սահմանված է 3000 ՀՀ դրամ) և անձնագիր: Հայտերն ընդունվում են երկուշաբթիից-ուրբաթ ժամը 10:00-17:00-ը, ընդմիջում՝ 13:00-14:00-ն:

Սակարկողը կարող է գինն ավելացնել մրցութային քայլի չափից ոչ պակաս գումարով: Եթե մասնակիցը չի հաղթել, նախավճարը անմիջապես վերադարձվում է նրան, եթե հաղթել է՝ նախավճարի գումարը ներառվում է վարձավճարի մեջ:

Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

Մրցույթն անցկացվում է բաց, որին մասնակցում են հանձնաժողովի անդամները, գրանցված անձիք և մրցույթի մասնակից չհամարվող անձիք (դիտորդի կարգավիճակով):

Մրցույթի մասնակից չհամարվող անձիք մրցույթին ներկա գտնվելու համար, յուրաքանչյուր լոտի համար առանձին ներկայացնում են սահմանված չափով (3000 ՀՀ դրամ) մուտքի վճարի անդորրագիր և անձնագիր:

Մրցույթն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է:

Մրցույթն սկսվում է, եթե սակարկողների թիվը մեկ կամ ավել է:

Մրցույթի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Մրցույթում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է ամբողջությամբ վճարել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը , որից հետո 5 օրվա ընթացքում կողմերի միջև կնքվում է վարձակալության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման:

Լոտի ուսումնասիրման համար կարող եք դիմել Մեծաձորի համայնքապետարան աշխատանքային օրերին 16:00-18:00: Հեռախոս՝ 094311749

Մեծաձորի համայնքապետարան